



ՃՐԱԳ



ԹԻՒ 4, Ա. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

- ◆ ՀՄԸՄ ԱԼՄԷԼՕ-Ի ՄԱՍՆԱՃԻՒՂԸ 17 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ
- ◆ ՀՄԸՄ-Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
- ◆ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ
- ◆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ
- ◆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ ԵՒ ՀԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐՏՈՒՄԸ
- ◆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ-ԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ
- ◆ ՆՈՐԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՐԱՔԸՆԻՆ
- ◆ ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՐՇՈՒԻԿՆԵՐՈՒՆ ԲԱՆԱԿՈՒՄ
- ◆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՄԱԿՈՒԵՑԱՆ ՀՄԸՄ-Ի ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 38-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՆ ՈՒ ՓԱՌԱՏՕՆԸ
- ◆ ԻՆՉՈՒ ԶՈՒՆԻՆ
- ◆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶՈՐՄ ԴԱՀԼԻՃՆԵՐԸ
- ◆ ՎԱ՛Յ ՎԱ՛Յ ԿՂԶԻ-ԵՆ ԼՈՒՐԵՐ
- ◆ ԵՄ ԶԷԻ ԳԻՏԵՐ

ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հասցե
Dahliastraat 9A 7601AW
Almelo, Nederland

Էլեկտրոնային հասցե
info@homenetmenholland.nl

Կայքից
www.homenetmenholland.nl

Ֆեյսբուք
Homenetmen Almelo

ՀՄԸՄ ԱԼՄԷԼՕ-Ի ՄԱՍՆԱՃԻՒՂԸ 17 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

23 Յունիս 2013ին Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի մասնաճիղը պաշտոնական աւարտեց իր 17 տարեկանը: Այս տարիներու ժամանակաշրջաններուն, մասնաճիղը ունեցաւ իր յատուկ պատմութիւնը: Հոլանտայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը միակ Հայկական միութիւնն է որ 17 տարիներու ընթացքին ունեցած է զորաւոր սկաւտական կազմ մը, որը կ'շարունակէ իր հիմնադիրներուն երթը:

Ինչպէս ամէն հայրենակցական միութիւն, եւս Հ.Մ.Ը.Մ.ը դժուարութիւններ ունեցած է ազգային ինքնութեան եւ մշակոյթային արժեքներու պահպանման հարցի շուրջ: Այսպէս, օրինակ, երկրի քաղաքական պայմանները եւ Հայ երիտասարդութեան ձուլումը: Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի մասնաճիղը ունեցած է զանազան մարզական խումբեր Ֆուտբոլ-ի, բասկետբոլ-ի, վոլիբոլ-ի եւ հանդբոլ-ի:

Նրանք տարիներ շարունակ մասնակցած են տեղական եւ հանրային մրցումներու: Ներկայիս ունի Ֆուտբոլ-ի խումբ պատանիներու ու երիտասարդներու ու մէկ վոլիբոլ-ի խումբ աղջկանց:

Պատմութեան մեջ մասնաճիղը կրած է ազգային եւ Հայրենասիրական մեծագոյն աշխատանք: Իր սկաւտական շարքերով միշտ մասնակցած է Ապրիլեան ցոյցերուն եւ ազգային տոներու արարողութիւններուն:

Այնուամենայնիվ Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ կառույցը, անհրաժեշտ կը կ'համարուի Հայաստանի կամ Սփիւռքին մէջ: Կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի մասնաճիղին եւ կը մաղթենք հարատեւ յաջողութիւններ: Թող Հ.Մ.Ը.Մ.-ի շուրքը ու հայկականութեան ոգին անպակաս ըլլայ մեր ժողովուրդին վրայէն: Պատրաստ ըլլալու համար ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ եւ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ:





Լորտ Պէյտեն Փաուրլ



Շաւարշ Քրիսեան



Գրիգոր Հակոբեան



Յովհաննէս Հինդլեան

ՀՄԸՄ-Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1907ին, անգլիացի զօրավար Լորտ Պէյտեն Փաուրլ հիմնեց սկաուտական շարժումը, մեկնելով երիտասարդները փոքր տարիքէն դաստիարակելու պահանջէն: Այդ օրերուն Պոլիսէն Հայ երիտասարդ մը՝ Շաւարշ Քրիսեան Եւրոպա գացած էր ուսանելու: Շաւարշ Քրիսեան Եւրոպա գտնուած իր շրջանին ծանօթացաւ ըսկաուտութեան: Ան էրք վերատարձաւ Պոլիս, թերթերու միջոցաւ սկաուտական շարժումը ծանօթացուց Հայերուն, գովելով այդ շարժումը դաստիարակչական, Ֆիզիքական եւ բարոյական յատկութիւնները: Շաւարշ Քրիսեանը կը մտածէր նաեւ հիմնել միութիւն մե, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն անուան տակ, որուն նպատակը պիտի ըլլար Հայ մարզական բոլոր ակումբները հաւաքել մէկ անունի տակ եւ կիրարկել նաեւ սկաուտութիւն:

Հայ վարժարաններն ու միութիւնները փորձեցին իւրացնել սկաուտական սկզբունքները: Յաջող աշխատանք տարին Յովհաննէս Հինդլեան, որ դըպրոցի տնօրէն էր, եւ Գրիգոր Յակոբեան, որ սկաուտութիւնը սիրող մըն էր: Այն երկուքը փորձեցին ըսկաուտութիւնը տարածել Պոլսոյ զանազան շրջանակներուն մէջ, սակայն համաշխարհային Ա. Պատերազմին պատճարով աշխատանքը յարաջ չգնաց: Այս պատերազմի ընթացքին Հայերը տեղահան եղան իրենց Հայրենիքէն եւ դարձան գաղթական: Պատերազմի աւարտին 1918 թուականին, Հայ գաղթականներ եւ որբեր սկսան հաստատուիլ Պոլսոյ մէջ, որ համեմատաբար նըւազ ազդուած էր պատերազմի հետեւանքներէն: Հոն գնտուող Հայերը ամէն ձեւով փորձեցին օգնել իրենց ազգակիցներուն:

Գրիգոր Յակոբեան, որ պատերազմէն ետք մնացած էր Պոլիս, իր գործակիցներուն ընկերակցութեամբ մտածեց կազմել սկաուտական խումբեր եւ սկաուտներու միջոցաւ օգնութեան հասնիլ այդ որբերուն: Անոնք ծրագրեցին հիմնել Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հայ սկաուտներու շարժումը, ինչպէս նախատեսած էր Շաւարշ Քրիսեան: Ծրագիրը յաջողեցաւ եւ նոր արձանագրուած սկաուտներ դրամ հաւաքելով, դէղ, դարման, հագուստ եւ տաքնալու փայտ Հայթայթելով օժանդակեցին չքաւոր ընտանիքներուն:

Միւս կողմէ, որբանոցներ բացուեցան Հայ որբերուն յատուկ: Հ.Մ.Ը.Մ.-ի ղեկավարները այդ որբանոցներուն մէջ հիմնեցին սկաուտական շարժում, խմբապետներ ուղարկելով անոնց: Սկաուտութիւնը արագ ձեւով զարգացաւ որբանոցներէն ներս: Շուտով կազմուած սկաուտական խումբերը իրարու միջեւ մարզական խաղեր կազմակերպեցին եւ հանդէսներով ներկայացան Հայ ժողովուրդին: Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտները մասնակցեցան Հայ ազգային եւ եւրոպական երկիրներու տօներուն առթիւ կազմակերպուած տողանցքներուն, ջահագնացութիւններուն եւ քաջալերուեցան ժողովուրդէն:

Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտները իրենց գիտելիքներու զարգացման եւ առողջ ու չարքաշ կեանքի վարժութեան համար մասնակցեցան բանակումներու, արշաւներու եւ զանազան աշխատանքներու:

Աղբիւր՝ «Հ.Մ.Ը.Մ.-ի Արի-Արեւոյշ ՆՈՐԱԳԻՐ»

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Խանասորի արշաանքը թիրախ ուներ քիւրտ Մազրիկ ցեղը, որ Հայաստեաց եւ թուրք կարավարութեան հաւատարիմ ցեղ մըն էր: Յեղապետ Շարաֆ Բեկի ղեկավարութեամբ, իրենց վայրագութիւններէն բացի, մազրիկցիները արգելք կ'ըլլային յեղափոխական գործունէութեան, Վանէն Պարսկաստան անցնող զինատար խումբերուն:



1897 Յուլիսին, Խանասորայ Վարդանի ղեկավարութեամբ, 250 ֆետայիներ իրենց նուիրական երդումը կատարելէ ետք, արշալոյսին կը յարցակին Մազրիկ ցեղին վրայ, որ տարի մը արաչ կոտորած էր Վանէն նահանջող 800 անցէն Հայ յեղափոխականներ:

Քիւրտերը շփոթած փախուստի կը դիմեն, բայց կ'իյնան արդարահայտոյց ֆետայիներու գնդակներու տարափին տակ: Դրացի զիւղերէն օգնութիւն կը փութան քիւրտերուն, բայց ֆետայիները կը շարունակեն իրենց պայքարը մինչեւ որ լաւ «դաս» մը կուտան անոնց:

Արշաանքը կ'ունենայ մեծ ազդեցութիւն, թէ՛ քիւրտերու մէջ ահ ու սարսափ ձգելով եւ թէ՛ Հայերուն ոգեշնչելով պայքարի աննրկուն ոգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

Քաղաք	Տարի	Ժամանակաշրջան
1. Տուշպա - Վան	մ.թ.ա. 825 - 6-րդ դար	Ուրարտուի Թագաւորութիւն
2. Արմավիր	մ.թ.ա. 1032թ.	Երվանդունիներու Թագաւորութիւն
3. Երվանդաշատ	մ.թ.ա. 220 - 201	Երվանդունիներու Թագաւորութիւն
4. Արտաշատ	մ.թ.ա. 185 - 77, մ.թ.ա. 60 - մ.թ. 120	Արտաշեսեաններ Թագաւորութիւն
5. Տիգրանակերտ	մ.թ.ա. 77 - 69	Արտաշեսեաններ Թագաւորութիւն
6. Վաղարշապետ	120 - 330 թ.	Արշակունիների Թագաւորութիւն
7. Դվին	336 - 428 թ.	Մարգպանական Հայատանի
8. Բագարան	428 - 928 թ.	Բագրատունիների Թագաւորութիւն
9. Շիրակավան	890 - 928 թ.	Բագրատունիների Թագաւորութիւն
10. Կարս	928 - 961 թ.	Բագրատունիների Թագաւորութիւն
11. Անի	961 - 1045թ.	Բագրատունիների Թագաւորութիւն
12. Երեւան	1918 թ. ...	Հայաստանի առաջին հանրապետութիւն

ԱՆՎԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐՏՈՒՄԸ

600 Տարուան գրկանքէ ու անարգանքէ ետք, 28 Մայիսի 1918ին, Հայ ժողովուրդը ինքնահաստատումի, ինքնակերտումի եւ վերապրումի իր կամքով աշխարհին կը ներկայանայ իբրեւ ինքնուրոյն պետութիւն: Այդ պետութիւնը կը ծնի «Ընդ հուր եւ ընդ սուր»:

Արդարեւ, 27 Փետրուար 1917ին, ցարական բռնատիրական իշխանութիւնը վերջ կը գտնէ շնորհիւ ռուսական մեծ յեղափոխութեան, որ Փետրսպուրկի մէջ կը հաստատէ ժամանակաւոր կառուարութիւն մը: Սակայն այդ կառուարութիւնը եւս երկար չի դիմանար եւ իր կարգին կը տապալի 25 Հոկտեմբեր 1917ին, Լենինի գլխաւորած համայնավարներու պետական հարուածու: Վրացիները, ազերիներն ու Հայերը կը մերժեն միանալ համայնաւարական իրաւակարգին եւ կը ստեղծեն ժամանակաւոր կառուարութիւն մը՝ «Անդիկովկասեան Կոմիսարիադ» անունով: Լենինի «դեպի տուն» կոչը պատճառ դարձաւ որ Կովկասի մէջ գտնուող ռուսական բանակը, որ 1916ին, Հայերու հետ գրաւած էր Վանը, Էրզրումը, Տարօնը եւ Երզնկան, վերադարձաւ Ռուսիա: Ուրեմն Հայկական փոքրաթիւ զունդերը դեմ յանդիման կը գտնուէին դարաւոր ոսոխին՝ թուրքին: Դժնդակ այս պայմաններուն մէջ, Հայոց Ազգային Խորհուրդը անմիջապէս կը կազմակերպէ Հայկական բանակ եւ զօր. Թովմաս Նազարբեկեան կը նշանակէ ընդհանուր հրամանտար:

Թուրքերը կ'օգտուին այս արիթէն եւ կը ծրագրեն վերագրաւել Արեւմտահայաստանը եւ հասնիլ մինչէլ Պարս: Դեկտեմբեր 1917ին հաշտութեան բանակցութիւններ տեղի կ'ունենան թուրքերու եւ «Անդիկովկասեան Կոմիսարիադ»ի միջեւ եւ կը ստորագրուի հաշտութեան դաշնակիր մը: Սակայն, երկար չի տւել եւ 1918 Յունուարի վերջերը թուրքերը կ'անցնին ընդհանուր յարձակողականի եւ կը գրաւեն Արեւմտահայաստանը:

3 Մարտ 1918ին կը ստորագրուի Պրեստ Լիթովսկիի դաշնակիրը, ըստ որուն՝ Կարսի, Արտահանի եւ Պաթումի կը յանձնուին թուրքերուն: Թուրքերուն յարաջխաղացքը կը շարունակուի եւ կը գրաւեն Ալեքսանդրպոլը (այժմու Գիւմրի): Հայկական բանակի մէկ մասը կը նահանջէ դեպի Սարդարապատ: Իսկ Համամլուի կայարանին գրաւումը թուրքերուն դիմաց կը բանայ Երեւանի ճամբան:

Հայաստանի իրավիճակը օրէ օր կը վատթարանայ եւ թուրքերը վերջին հարուածով կը պատրաստուին գրաւել Արեւելահայաստանն ալ: Կասեցնելու համար թուրքերուն Արեւելահայաստան թափանցումը, հարկ էր որ Հայերը դիմադրէին երեք ճակատներով՝ Բաշ Ապարան, Սարդարապատ եւ Ղարաքիլիսէ:

Սարդարապատի կռիւները կը սկսին 21-22 Մայիսին: Թուրքը ամէն գնով կը փորձէ վճրական հարուած տալ Հայերուն: 23 Մայիսին, երբ զօր. Միլիկեան յարձակումի հրամանը կ'ուտայ, Հայերը մէկ մարդու նման ոտքի կանգնած՝ կը ճակատին թշնամիին դեմ, «Ազատութիւն կամ մահ» վճրական կամքով:

24 Մայիսին, զօր. Նազարբեկեանը հրաման կ'ուտայ անցնելու ընդհանուր յարձակումի: Երբ Սարդարապատի եւ Բաշ Ապարանի մէջ Հայկական բանակին յաղթանակին լուրը կը հասնի, թուրքերը յուսալքուած կը սկսին նահանջել: Յաջորդ օրերու ընթացքին, ժողովներէ ետք, Հայաստանը կը յայտարարուի անխակ:

Աղբիւր՝ «Հ.Մ.Ը.Մ.-ի Արի-Արեւոյշ Ա. ԿԱՐԳ»

Այս տարի եւս Հ.Մ.Ը.Մ. Ալմէլօ-ի սկառուները մեծ հաճույքով մասնակցեցան Հայաստանի առաջին Հանրապետութեան անկախութեան 95-րդ տարեդարձին բացման արարողութեան, ուր տեղի ունեցաւ Գալուստ Կիւլպէնկեան սրահէն ներս, ի կազմակերպութեամբ Հոլանտայի «Հայ Տուն»ի կողմէ:



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ-ԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմավարական ամուր ծրագիր մը պետք է կարենայ լուծումներ առաջադրել հարցումներուն ոչ կարեւորութեան կարգով:

1. Մտահոգուած ենք սկաուտութեան ցուցանիշերով: Ինչպէս կրնանք առաջը առնել սկաուտութեան որակական եւ քանակական անկումին:
2. Հ.Մ.Ը.Մ.ը ինչպէս կրնայ քայլ պահել փոխուող ընկերային ցանցագործութեան եւ արհեստագիտական յառաջխաղացքին հետ, որոնք կազդեն մեր երիտասարդութեան վրայ եւ, միաժամանակ պահպանել ապագայ սերունդները հայկական ուժեղ ինքնութեամբ սնուցանելու մեր նպատակը:
3. Ինչպէս երիտասարդութիւնը յանձնառու դարձնել մեր կազմակերպութեան կառավարումին:
4. Ինչպէս կարելի է աւելի լաւ հասնիլ Հայ երիտասարդութեան, որ սահուն չէ Հայերէնի մէջ:
5. Ինչպէս հասնիլ աւելի շատ թուով Հայ ուսանողներու, ոչ- Հայկական վարժարաններու մէջ, որպէսզի զանոնք մասնակից դարձնենք մեր կազմակերպութեան:
6. Ինչպէս տարածուիլ եւ ներգրաւել հետաքրքրութիւնը տարբեր ենթամշակոյթներուն իւրաքանչիւր համայնքէ ներս:
7. Ինչպէս ընդլայնել Հ.Մ.Ը.Մ.ի քաջողականութիւնը յաչա «մասնագիտականօրէն յաջողած» խաին:
8. Ինչպէս ստեղծել առեւտրական ծրագիրներ մեր մասնճիւղերուն եւ մտական կայութիւնը ապահովելու համար:
9. Ինչո՞ւ գործածել արհեստագեութիւնը միակերպութիւն եւ թափանցիկութիւն ստեղծելու համար հաշուապահութեան մէջ:
10. Ինչպէս յաջողութեամբ նաւարկել մեր կազմակերպութեան կամաւորութեան եւ մասնագիտական յանձնձումին միջեւ:
11. Ինչպէս ստեղծել ռազմավարական լաւագոյն գործակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հետ:
12. Ինչպէս տարածել Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի հանրապետութեան մէջ:

Կ'ըսուի թէ « Բոլորը կը նախընտրեն յառաջիմութիւնը բայց քիչեր հետամուտ են փոփոխութեան»: Պէտք է յիշենք թէ մեզ դիմագրաւող մարտահրաւերը յառաջդիմութենէ աւելի լաւը ընելն է: Մենք հետամուտ ենք իսկական փոփոխութիւն իրագործելու:

«Նպատակ արանց ծրագրի, պարզապէս ցանկութիւն է»

Աղբիւր՝ «Հ.Մ.Ը.Մ.-ի Ռազմավարական Ծրագիր»

ՆՈՐԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՔԸԻՔՆ

21 Սեպտեմբեր 1991ին Հայրենի Հայությունը խիտ շարքերով ներկայացան քուեարկութեան կեդրոնները եւ 99,31% ով (այո) պատասխանեց «Համաձայն էք, որ Հայաստանի Հանրապետությունը ըլլայ անկախ ժողովրդավարական պետություն, Խորհրդային Միութեան Կազմէն դուրս» հարցումին:

23 Սեպտեմբեր 1991ին գումարուեցաւ Հայաստանի Գերագոյն Խորհուրդի պատմական նիստը, որուն ընթացքին ընթերցուեցաւ Գերագոյն Խորհուրդի նախագիծը Հայաստանի Հանրապետությունը անկախութեան մասին: Որոշումը ընդունուեցաւ Գերագոյն Խորհուրդի կողմէ: Քուեարկութենէն ետք հնչեց հանրապետութեան քայլերգ «ՄԵՐ ՀԱՅՐԵՒՔ»ը:

Սեպտեմբեր 21ի ժողովրդային հանրաքուեով եւ Սեպտեմբեր 23ի Գերագոյն Խորհուրդի կողմէ Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն հռչակումով վարագոյրը վերջնականապէս իջաւ Խորհուրդային Հայաստանի վրայ, եւ ծնունդ առաւ Հայկական նորանկախ հանրապետությունը:

Հայաստանի անկախությունը շուտով ճանչցան աշխարհի բոլոր երկիրները, անոր հետ հաստատելով դիւանագիտական յարաբերություններ:

Հայաստանը 2 Մարտ 1992ին անդամակցեցաւ ՄԱԿին եւ պաշտօնապէս մուտք գործեց միջազգային քաղաքական թատերաբեմ:

Աղբիւր՝ «Հ.Մ.Ը.Մ.-ի Արի-Արեւոյշ Ա. ԿԱՐԳ»

ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Յունիս 2013-ին Ալմէլօ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Գայլիկներու եւ Արծուիկներու բանակումը որը նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 95-ամեակին: Այնտեղ մասնակցեցան 8 գայլիկներ, 10 արծուիկներ, 2 աստիճանաւորներ եւ 3 խմբապետներ:

Շաբաթ 22 Յունիս 2013, բանակումին մասնակցողները համախմբուելէ ետք կատարուեցաւ պաշտօնական բացման հանդիսատր արարողությունը, ուր ետք շարունակեցին պատրաստուած օրուայ ծրագիրը:

Կիրակի 23 Յունիս 2013, առաւօտեան մարզանքի աւարտեն ետք բոլորը միասնաբար հաճելի նախաճաշի սեղանի մասնակցեցան: Կեսօրին միացան մնացած քոյրերը եւ եղբայրները ու շարունակեցին իրենց սկաուտական գործունէությունը: Վերջինը, սակայն ոչ պակաս կարեւորը՝ նշուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմէլօ-ի 17-րդ տարեդարձը, ստեղծելով շէն ու գուարթ մթնոլորտ մը:




ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱՆ ՀՄԸՄ-Ի
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 38-ՐԴ ՄԱՐԶԱԽԱԴԵՐՆ ՈՒ ՓԱՌԱՏՕՆԸ



Հաճելի գուգաղիպություն մըն է այն, ահա 38 տարիէ ի վեր Լոս Անճելըսի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ի ամենամեայ մարզական խաղերն ու փառատօնը տեղի կ'ունենան Միացեալ Նահանգներու անկախութեան տօնին: Ըստ ասանդութեան այս տարի եւս, Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեամբ եւ Նաւասարդեան Մարզախաղերու յանձնախումբի ճիգերով 3-6 Յուլիս տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.-ի մարզախաղերն ու փառատօնը՝ Պըրմիսկիան Հայ Սքուլի մէջ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի Գալիֆորնիոյ 18 մասնաճիւղերու մարզիկներու, սկաուտներու, ամէն տարիքի միութենականներու եւ ժողովրդայի հոծ բազմութիւններու: Չորսօրեայ Փառատօնի ընթացքին Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ իր միութենական վահանին տակ համախմբել ասելի քան երեսունհինգ հազար հայեր, որոնք անգամ մը եւս եկան

իրենց յարգանքն ու նուիրումները յայտնելու Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան եւ անոր ազգանուէր գործունէութեան:

Չորս օրերու ընթացքին Հայ Սքուլի մարզադաշտերը յորդեցան խանդավառ մարզիկներով եւ իրենց քաջալերելու եկած հարգատներու ներկայութեամբ: Վայրը կը թնդար տարբեր մարզախաղերու գնդակներու, մարզիկներու վազքերու եւ ի պատիւ Հ.Մ.Ը.Մ.-ի յաղթանակի կանչերու երիտասարդական ոգիով: Կողովագնդակ, ռոննագնդակ, ձեռնագնդակ, մէկ քայլ ռստում, լող, Tennis եւ Table Tennis. ահա՛ այն մարզախաղերը, որոնք կիրարկուեցան մեծ ոգեւորութեամբ: Առաջին անգամ ըլլալով այս փառատօնը ընդգրկեց նաեւ մանկական յատուկ խաղավայր մը, ուր փոքրիկները առիթը ունեցան առաւելագոյն չափով գուարճանալու:



Ինչ կը վերաբերի մրցաշարքերու արդիւնքներուն, Կողովագնդակի առաջնութիւնը խլեց «Արարատ» մասնաճիւղը, երկրորդ հանդիսացաւ «Մասիս» մասնաճիւղը, իսկ երրորդ տեղը գրաւեց «Լոս Անճելըս» մասնաճիւղը: Ոտնագնդակի մէջ առաջին հանդիսացաւ «Լոս Անճելըս» մասնաճիւղը, իսկ յաջորդաբար «Արարատ» եւ «Մասիս» մասնաճիւղերը խլեցին Բ. Եւ Գ. տեղերը: Ձեռնագնդակի Ա. Տեղը գրաւեց «Մասիս» մասնաճիւղը, իսկ Բ. Եւ Գ. տեղերը՝ յաջորդաբար «Արարատ» եւ «Շանթ» մասնաճիւղերը: Մէկ քայլ ռստումի առաջին երեք դիրքերը յաջորդաբար խլեցին «Ազատամարտ», «Շանթ» եւ «Մասիս» մասնաճիւղերը: Լողի մէջ առաջնութիւն ստացաւ «Մասիս», իսկ Բ. Եւ Գ. հանդիսացան «Արարատ» եւ «Արագ» մասնաճիւղերը: Tennis-ի մրցաշարքի աւարտին Ա. հանդիսացաւ «Մարդարապատ», իսկ Բ. Տեղը գրաւեց «Միփան» մասնաճիւղերը: Table Tennis-ի առաջնութիւնը խլեց «Արարատ», իսկ Բ. Եւ Գ. հանդիսացան «Մատուն» եւ «Միփան» մասնաճիւղերը:

Փառատօնի իւրաքանչիւր գիշեր յատկանշուեցաւ գեղարուեստական յայտագրով: Ամէն



երեկոյ մթնոլորտը խանդավառեցին հայաստանցի եւ սփիւրքահայ հանրաձանօթ երգիչներ, որոնք հանդէս եկան ժողովրդային եւ ազգային ու յեղափոխական շարք մը երգերով: Չորսօրեայ Փառատօնին ընթացքին Հ.Մ.Ը.Մ.-ի 18 մասնաճիւղեր, հայկական տարբեր հաստատութիւններ եւ ուտեստեղէնի ներկայացուցիչներ մարզադաշտի համալիրէն ներս տեղադրուած կրպակներու ճամբով մեծապէս նպաստեցին Փառատօնի յաջողութեան:

Հ.Մ.Ը.Մ.-ի 38-րդ Նաւասարդեան Մարզախաղերու նուիրուած փառատօնը յատկանշուեցաւ 18 մասնաճիւղերու տողանցքով: Խրոխտաբար տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.-ի մարզիկներ, կակուղ թաթիկներու, գայլիկերու վոհմակներ,

Տողանցքը եզրափակուեցաւ պաշտօնական բաժնով մը, որուն ընթացքին յաջորդաբար խօսք առին Գալիֆորնիոյ Նահանգի խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեան, Շերիֆ Լի Պաքա, ԱՄՆ Ծերակոյտի անդամ Պրէտ Շըրմէն, Նաւասարդեան յանձնախումբի ներկայացուցիչ էրբ. Միեր Դաւիթեան, Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային Վարչութեան ատենապետ էրբ. Կառնիկ Ապրահամեան, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ էրբ. Վիկէն Տադէան եւ Արեւմտեան թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ի ներկայութեան Փառասօնի Պատուոյ Նախագահ Տէր եւ տիկին Սարգիս եւ Ալին Նուտեանի, Տիպար Հ.Մ.Ը.Մ.-ական էրբ. Զարեհ Էքմէքճեանի, ինչպէս նաեւ պաշտօնական հիւրերու, որոնց շարքին էին՝ ԱՄՆի մէջ Հայաստանի հիւպատոս Արտակ Գալուստեան, Լիբանանի հիւպատոս Ճանի Իպրահիմ, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ Վիգէն Եագուպեան, այլեւ շրջանի միութիւններու եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Տողանցքի աւարտին տեղի ունեցաւ հրավառութիւն: Յայտնենք, որ առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ.-ի 38-րդ մարզախաղերու տողանցքը ուղիղ եթեր սփռուեցաւ USA ARMENIA հեռատեսիլի կայանէն:

Վարձքը կատար 38-րդ Նաւասարդեան Մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին, ենթայանձնախումբերուն, օժանդակող մարմիններու եւ անհատներու, ինչպէս նաեւ այն բազում կամաւորներուն, որոնք ամբողջ ամիսներ անշահախնդրօրէն ծառայեցին, աշխատեցան ու գործեցին յանուն Հ.Մ.Ը.Մ.-ի ամենամեայ Փառասօնի յաջողութեան եւ նպատակներու իրականացման:

Աղբիւր՝ «Միլիա Գրիգորեան Հ.Մ.Ը.Մ. Արեւմտեան Ամերիկայի շրջանի հարաբերական յանձնախումբի անդամ»



ԻՆՉՈ՞Ւ ԶՈՒՆԻՆ...

«Ներկայի երիտասարդները չունին անցեալի երիտասարդներուն գաղափարապաշտութիւնն ու զոհողութիւնը», կը հաստատէինք մեր նախորդ խմբագրականներէն մէկուն մէջ (թիւ 365-366): Հաստատումը լայն արձագանգ կը գտնէր ընթերցողներու մօտ եւ տեղի կու տար այլատեսակ մեկնաբանութիւններու: «Ինչ որ ցանես այն կը հնձես» կը գրէր մէկը, «առիթը տուէք որ գործեն» կ'ընդգծէր մէկ ուրիշը:

Երեւոյթը նոր չէ: Առաջին անգամը չէ որ նոր սերունդը կը մեղադրուի ազգային-միութենական գործունէութեան հանդէպ իր ունեցած հետաքրքրութեան եւ խանդավառութեան պակասին համար: Հայրերու եւ որդիներու ընթացիկ պայքարին մէկ արտայայտութիւնն է այս: Բայց, անշուշտ, միայն այդ չէ:

Այսօրուան երիտասարդութիւնը, անկասկած, շատ աւելի հաշիւը գիտցող, գործնական ու կենցաղասէր է, քան զգացական թռիչքներով ապրող եւ անհաշիւ զոհողութեան ընդունակ գաղափարապաշտ հիները:

«Արտաքին երեւոյթներէն պէտք չէ խաբուիլ,- կ'առարկեն նորերը,- երբ գործի ժամը գայ՝ կը տեսնէք թէ ինչէ՞ր կրնայ ընել նոր սերունդը»:

Երեւոյթներէն անդին, հարցը լուրջ է եւ ունի իր պատճառները, որոնք կը կարօտին խոր քննութեան: Երբ պատճառները փնտռելու սկսինք, մեր ուշադրութիւնը ամենէն առաջ կը սեւեռի դաստիարակութեան հարցին վրայ, որ ամենէն շօշափելին է:

Դաստիարակութեան դերը կարելու է եւ ոչ ոք կրնայ ժխտել, բայց դաստիարակութիւնը առանձին բաւարար է հարցին եւութիւնը բացատրելու համար: Իսկ դուրսի մթնոլորտը, մեզ շրջապատող պայմանները...

Ծանօթ են հաճոյասիրութեան եւ նիւթապաշտութեան այն տրամադրութիւնները, որոնք առաւել կամ նուազ չափով վարակած են միջազգային երիտասարդութիւնը: Մերինները կողմի մէջ չեն ապրիր: Անոնք արտաքին աշխարհին հետ կենդանի շփում եւ կապ ունին ամէն օր ու ամէն վայրկեան: Տակաւին չ'արժէր խօսիլ յոռի բարքերու եւ բարոյական այլասերումներու տեսակաւոր երեւոյթներու մասին, որոնք իրենց աւերները կը գործեն քիչ մը ամէն տեղ: Բնական է, որ հայ երիտասարդութիւնն ալ տարուի նման հոսանքներով, հեռանալով իր արմատներէն ու պարպուելով իր արժէքներէն:

Պէտք է իրատես ըլլալ եւ ամէն ինչի պատճառը անպայման չփնտռել ներսը, մեր մէջ, մեր ազգային-միութենական կեանքին ու դաստիարակութեան կապուած դժուարութիւններուն մէջ: Անոնք դեր ունին, բայց անոնց կողքին կան նոյնքան կարելու այլ իրականութիւններ:

Կեանքը եւ գործը կը հասունցնեն այն սերմերը, զորս կրթական թէ միութենական պատասխանատուներ կը ցանեն նորերու հոգիներուն մէջ: Իսկ երբ կեանքի պայմանները աննպաստ կ'ըլլան սպասուած ծաղկումին համար, ու երբ կենդանի գործն ալ երբեմն կը բացակայի, պէտք չէ զարմանալ թէ ինչո՞ւ երիտասարդութեան մէջ կը պակսի գաղափարապաշտութիւնն ու զոհողութիւնը:

Առանց բացառութիւնները նկատի առնելու, խօսքը մեծամասնութեան մասին է: Տարիները որքան թաւալին, ցաւը այնքան աւելի պիտի խորանայ, որովհետեւ հայ երիտասարդը աւելի ու աւելի պիտի սկսի նմանիլ իր շուրջի միւս երիտասարդներուն: Ու նմանութիւնը այս պարագային միայն արտաքինով եւ հագուստ-կապուստով պիտի չըլլայ, այլեւ՝ հոգիով, մտածելակերպով ու աշխարհայեացքով:

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
Խմբագրական թիւ 369

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՉՈՐՄ ԴԱՀԼԻՃՆԵՐԸ

Հայաստանի հանրապետության շրջանին իրարու յաջորդած են չորս դահլիճներ

Ա) 1918 Մայիսի վերջին մինչև 1919 Մարտ Յովհաննէս Քաջազունի դահլիճը: Այս շրջանը պետական կազմակերպչական շրջանն է:

Բ) 1919 Մարտին մինչև 1920 Մայիս 5 . Ալեքսանդր Խատիսեանի դահլիճը: Այս շրջանը քաղաքացիական ստեղծագործական շրջան կարելի է կոչել:

Երկու տարաուան այս ժամանակաշրջանին աւարտին , հակառակ արտաքին թէ ներքին ամէն կարգի դժուարութիւններուն . Հայաստանը կը ներկայանար իբրեւ քաղաքացիական յստակ գիտակցութիւն ունեցող պետական ամբողջութիւն: կազմակերպուած էին պետական մեքենան, դպրոցական ցանցը . խնամատարական գործը , հիւանդանոցները, պարենատրման գործը, դրամի շրջագայութիւնը, բանակը , դիւանագիտական յարաբերութիւնը եւայլն: Հայաստանի կառավարութիւնը ձեռնարկած էր ներքին եւ արտաքին (արտասահմանի հայերու մօտ) նուիրահաւաքի եւ պետական փոխառութեան:

Գ) 1920 Մայիս 5էն մինչև 1920 Նոյեմբեր 23. Բժիշկ Համօ Օհանջանեանի դահլիճը (Բիւրօ – կառավարութիւն),որ իշխանութեան գլուխ եկաւ պայքարելու համար համայնավարներու մայիսեան ապստամբութեան եւ թրքականներքին դաւադրութիւններուն դէմ:


Դ) 1920 Նոյեմբեր 24էն մինչև Դեկտեմբեր 2.Սիմոն Վրացեանի դահլիճը: Որուն պիտի վիճակուէր Խորհրդային Ռուսիոյ ներկայացուցիչներուն հետ ստորագրել խորհրդայնացման համաձայնագիրը:

Արի -Արենոյշ

Ա . Կարգ



Յովհաննէս
Քաջազունի



Ալեքսանդր
Խատիսեան



Համօ
Օհանջանեան



Սիմոն
Վրացեան

ՎԱՅ ՎԱՅ ԿՂՁԻ-ԵՆ ԼՈՒՐԵՐ

Մեր կղզիին հայ գիտնականներուն վերջին հրատարակություններեն մաս մը վերլուծումներեն պիտի փոխանցենք ձեզի, այն ինչոր կը պատկանի մարմնակրթական եւ մարզանքի մասին:

Իրենց (գիտնականներուն) տուեալներուն համաձայն Հայերու 90% հաւաքական (խմբային) մարզերու մասնակցութիւնները պտղաբեր չէ, իսկ 10% իւրաքանչիւր անհատական մասնակցութիւնները կ'աւարտուի մետալեօններով, պատճառները նշելու համար կարճ յօդուածով չի կարելի է փոխանցելու ձեզ:


Այս չի նշանակեր թէ Հայերուն բոլոր հաւաքական աշխատանքները միշտ պտղաբեր չեն:

ԵՍ ՉԷՒ ԳԻՏԵՐ

Բանաստեղծութեան առաջին տանը բառերը չնչելէ ետք, մնացած տարերը հաւաքելով պիտի գտնէք բանաստեղծին անունը:

*«Ես չէի գիտեր, որ արագածի լանջերն են հզօր
Իսկ ձորերը խոր
Ու վերելքն անոր, որքան սուկալի
Այնքան ալ է դիր:»*

ր	ե	տ	ի	գ	ը	ր	ե	ր	ն	ձ
վ	ե	ր	ե	լ	ք	ն	ա	ն	ւ	ր
ա	ա	ն	ր	ր	ն	խ	մ	ք	ն	ի
յ	ի	է	չ	թ	է	կ	ս	ի	ա	ծ
ն	ե	ն	ա	ն	ն	ր	ճ	ե	ք	ա
ք	ս	ա	լ	ա	հ	գ	օ	ր	ր	գ
ա	ր	ւ	ի	դ	ն	է	,	է	ն	ա
ն	.	,	ի	լ	ա	կ	ս	ն	ս	ր
լ	ա	ն	ջ	ե	ր	ն	:	ե	ն	ա





Lord Baden-Powell



Shavarsh Krisian



Krikor Hagopian



Hovhannes Hintlian

GESCHIEDENIS HOMENETMEN SCOUTING

In het jaar 1907 heeft de Engelsman Lord Baden-Powell de scouting opgericht met als doel jongeren te doceren. In die tijd was een Armeense jongen, Shavarsh Krisian, vanuit Istanbul naar Europa gegaan om te studeren. Daar maakte Shavarsh Krisian kennis met de scouting. Toen hij terugkeerde naar Istanbul introduceerde hij door middel van kranten scouting aan het Armeense volk. In de kranten benadrukte hij vooral de leerzame, fysieke en ethische voordelen van scouting. Shavarsh Krisian had ook het idee om een Armeense vereniging op te richten onder de naam "Algemeen Armeense Sport Vereniging" met als doel om alle Armeense sportverenigingen onder één naam te verzamelen en daarbij ook scouting uit te oefenen.

Het Armeense volk en de Armeense verenigingen probeerden de beginselen van de scouting zich eigen te maken. Daar hebben Hovhannes Hintlian, directeur van een school, en Krikor Hagopian, een liefhebber van scouting, een grote bijdrage aan geleverd. Deze twee probeerden de scouting in verschillende gebieden in Istanbul te verspreiden maar de Eerste Wereldoorlog verhinderde dit. Tijdens deze oorlog werden Armeniërs verdreven uit hun vaderland hierdoor werden vele Armeniërs vluchtelingen. Aan het eind van de oorlog, rond 1918, begonnen Armeense vluchtelingen en wezen zich te vestigen in Istanbul, mede omdat Istanbul niet veel gevolgen van de oorlog ondertroef. De Armeniërs die zich daar bevonden probeerden op allerlei manieren mede-Armeniërs te helpen.

Krikor Hagopian, hij was na de oorlog in Istanbul gebleven, bedacht samen met zijn collega's om scoutingsgroepen te vormen en door middel van die groepen hulp te bieden aan de Armeense wezen. Zij richtten Homenetmen en de scoutingsbeweging op, zoals Shavarsh Krisian had gepland. Het programma slaagde en nieuwe scouts brachten hulp aan gezinnen door geld, medicijnen en kleding in te zamelen. Tegelijkertijd werden er weeshuizen geopend speciaal voor Armeense wezen. In die weeshuizen vormden de leiders van Homenetmen scoutingsgroepen door er leiders en scouts naartoe te sturen. Hierna werden er door de scouts spelen georganiseerd hiermee toonden zij zich aan het Armeense volk. De scouts van Homenetmen namen deel aan nationale vieringen van zowel Armenië als andere Europese landen. Ook namen zij deel aan campings en andere werkzaamheden van scoutingsgroepen om met name hun eigen kennis te verbreden.

Bron: "Homenetmen-i Ari-Arenoush Norakir"

SCOUTKAMP KAYLIG-ARDZVIG

Op 22 en 23 juni 2013 heeft in Almelo de jaarlijkse scoutkamp van Homenetmen plaatsgevonden. Deze kamp, gehouden ter ere van het 95e jublieum van Homenetmen, was bedoeld voor de Kayligs en de Ardzvigs. Aan de kamp hebben acht Kayligs, tien Ardzvigs met hun twee begeleiders en drie leiders deelgenomen.

Zaterdagmiddag begonnen de scouts hun kamp van twee dagen. Na de openingsceremonie dineerden de scouts samen en vulden zij de dag met verschillende scoutingsactiviteiten en spellen.

Op zondagochtend hebben de scouts na de gebruikelijke ochtendgymnastiek samen ontbeten. 's Middags sloot de rest van de scouts zich aan bij de aanwezige groep en hebben zij hun werkzaamheden vervolgd. Aan het eind van de middag hebben de scouts in een euforische sfeer de 17e verjaardag van Homenetmen Almelo gevierd.

